ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/48

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Բողոք բերող՝ «Արհովշին» ՍՊԸ

Գնման Մրցույթի ծածկագիրը և առարկան՝
«ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ, գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արհովշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետը և ընդունել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտն 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

2. մասնակի՝ «Գայսաթ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով, դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը,

3. դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետը,

4. ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.04.2020թ.-ին:

08.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/48 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2020թ.-ին:

2. «Արհովշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արհովշին» ՍՊԸ-ն 07.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով բաց մրցույթին:

Գնման առարկան խմբագրված է երեք չափաբաժիններում:

Գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ-ի N 2 արձանագրության 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Գոհարիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ-ի N 2 արձանագրության 2-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և մերժվել է, իսկ 1-ին չափաբաժնի մասով գնահատվել է բավարար:

Համաձայն գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ-ի N 2 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետի՝ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել

«Գայսաթ» ՍՊԸ-ն, 3-րդ ենթակետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Ավա-Բիլդինգ» ՍՊԸ-ն, 4-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով՝ Բողոքաբերը:

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ-ի N 2 արձանագրությունը, ինչպես նաև 03.04.2020թ-ի պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը կազմված է ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով «Գայսաթ» ՍՊԸ-ի գնային առաջարկը սխալ է կազմված, մասնավորապես՝ ԱԱՀ-ի դաշտում մասնակցի կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարը լումաներ չի պարունակում, սակայն մասնակիցը ԱԱՀ-ի գումարը կլորացրել է:

Այսպես՝

Ինքնարժեք	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գին*
89 523 700	*9 847 610*	*19 874 260*	*119 245 560*

Այսպիսինն է 1-ին չափաբաժնի մասով «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը:

*ԱԱՀ-ն=(ինքնարժեք+շահույթ)*20%, այսինքն՝ (89523700+9847610)*20%= 19874262:*

Ինչպես տեսնում ենք «Գայսաթ» ՍՊԸ-ի գնային առաջարկի ԱԱՀ դաշտը լումաներ չի պարունակում, հետևաբար մասնակցի կողմից ԱԱՀ-ի գումարի կլորացումը չի ներառվում Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բացառությունների մեջ, ուստի նման պայմաններում գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով ևս պարտավոր էր անբավարար գնահատեր և մերժել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտը:

Բացի այդ, 1-ին չափաբաժնի մասով «Գայսաթ» ՍՊԸ-ի գնային առաջարկի մանրամասն ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բացի վերը նշվածից առկա է ևս մեկ հանքամանք, որի առկայության պայմաններում գնահատող հանձնաժողովը կրկին պարտավոր էր անբավարար գնահատեր և մերժել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտը:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Այսպես՝

Ինքնարժեք	*Շահույթ*	*ԱԱՀ*	*Ընդհանուր գին*
89 523 700	*9 847 610*	*19 874 260*	*119 245 560*

Ինչպես տեսնում ենք մասնակցի գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական գումարը չի համապատասխանում ընդհանուր գնին, այն 10 ՀՀ դրամով պակաս է:

Եթե մի պահ նույնիսկ ընդունենք, որ մասնակցի գնայի առաջարկը ԱԱՀ-ի մասով խախտում չի պարունակում, այս դեպքում խախտումն ակնհայտ է, սակայն, չգիտես ինչու, այն հաշվի չի առնվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Նշեմ, որ այս խախտումը ևս ներառված չէ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի բացառությունների մեջ, հետևաբար «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտը այս մասով ևս պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետը և ընդունել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտն 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

2. մասնակի՝ «Գայսաթ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով, դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը,

3. դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետը,

4. ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

3. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.04.2020թ.-ին թիվ գրությամբ դիմել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 13.04.2020թ.-ին ներկայացված թիվ Ե/01/634-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2020 թվականի մարտի 4-ին հրապարակվել է ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1 ծածկագրով՝ «ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ, Լեհվազ և Մեղրի համայնքների գազաֆիկացման» աշխատանքների ձեռքբերման Մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) հրավերը (այսուհետ՝ հրավեր), որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2020 թվականի մարտի 19-ին:

Հրավերով հրապարակվել է շինարարական աշխատանքների դեպքում պարտադիր բաղադրիչ հանդիսացող ծավալաթերթը, որը լրացվում է մասնակիցների կողմից, ինչի հիման վրա ձևավորվում է գնային առաջարկը: Համաձայն նշված ծավալաթերթի 6-րդ և 7-րդ սյունակների՝ գումարները ներկայացվում են հազար դրամներով:

«Գայսաթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ մասնակից) կողմից հրավերով սահմանված կարգով լրացվել է ծավալաթերթը Պատվիրատուի կողմից հրապարակված ձևաչափով, հաստատվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ներկայացվել excel և PDF ձևաչափերով, իսկ ստացված ինքնարժեքի, շահույթի, ԱԱՀ-ի և ընդհանուր գնի գումարները նույնությամբ արտացոլվել են հրավերով սահմանված գնային առաջարկում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից գնային առաջարկով ներկայացված թվաբանական անհամապատասխանությունը հանդիսանում է excel ձևաչափով կազմված ծավալաթերթ-նախահաշվի հրապարակված ձևաչափի կլորացման հետևանքով առաջացած անհամապատասխանություն (ընդամենը՝ 12 ՀՀ դրամ), իսկ մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում ներառված գումարները և բանաձևերը ճիշտ են հաշվարկված՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից հրապարակված փաստաթղթերում, ինչպես նաև մասնակցի կողմից ներկայացված միևնույն փաստաթղթերում առկա է երկակի մեկնաբանություն պարունակող տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է վերոնշյալ երկակիությունը մեկնաբանել հօգուտ մասնակցի՝ վերջինիս կողմից ներկայացրած հայտը գնահատելով բավարար, որի համար կիրառվել է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32–րդ մասի 2 – րդ կետի «դ» ենթակետի անալոգիան:

Հարկ է նշել նաև, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի և 2-րդ տեղ զբաղեցրած «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկների տարբերությունը կազմում է գրեթե 9,700,000 ՀՀ դրամ, որի պարագայում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն առաջնորդվել է պետական միջոցների արդյունավետ ծախսման պարտադիր սկզբունքով:

Կից ներկայացվում է «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ excel ձևաչափով և հաստատված, և գնային առաջարկը:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/48բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2020թ.-ին հայտարարվել է «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Արհովշին» ՍՊԸ-ն և «Գայսաթ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

«Գայսաթ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի չգազիֆիկացված տարածքների գազիֆիկացման աշխատանքներ	89 523 700 /ութսունի ինը միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր/	9 847 610 /ինը միլիոն ութ հարյուր քառասուն յոթ հազար վեց հարյուր տաս/	19 874 260 /տասնինը միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր վաթսուն/	119 245 560 /հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր վաթսուն/

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության.

- 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում չափաբաժին 2-ում բացակայում են հրավերով հրապարակված ծավալաթերթ-նախահաշվի 1-5-րդ տողերը, իսկ չափաբանին 3-ի գնային առաջարկով (հավելված 2) ներկայացված գումարները չեն համապատասխանում ծավալաթերթ-նախահաշվով ներկայացված գներին:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

- 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատվել է մրցույթի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը համաձայն աղյուսակի՝

Մասնակցի զբաղեցրած տեղը	Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3
1	«Գայսաթ» ՍՊԸ	«Ավա Բիլդինգ» ՍՊԸ	«Արհովշին» ՍՊԸ
2	«Արհովշին» ՍՊԸ	«Արհովշին» ՍՊԸ	-

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժի մասով ընտրված մասնակից

հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Գայսաթ» ՍՊԸ-ին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային

առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.03.2020թ.-ին հայտարարված «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Գայսաթ» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնի համար ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	***4***	***5***	***6=3+4+5***
1	Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի չգազիֆիկացված տարածքների գազիֆիկացման աշխատանքներ	89 523 700 /ութսունի ինը միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր/	9 847 610 /ինը միլիոն ութ հարյուր քառասուն յոթ հազար վեց հարյուր տաս/	19 874 260 /տասնինը միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր վաթսուն/	119 245 560 /հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր վաթսուն/

Հանձնաժողովի 03.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության.

- 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

- 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից հաստատվել է մրցույթի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը համաձայն աղյուսակի՝

Մասնակցի զբաղեցրած տեղը	Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3
1	«Գայսաթ» ՍՊԸ	«Ավա Բիլդինգ» ՍՊԸ	«Արհովշին» ՍՊԸ
2	«Արհովշին» ՍՊԸ	«Արհովշին» ՍՊԸ	-

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժի մասով ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Գայսաթ» ՍՊԸ-ին:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից 1-ին մասով ներկայացված գնային առաջարկի հաշվարկը չի

համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ սխալ է հաշվարկվել մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը՝ հետևաբար սխալ է ներկայացվել պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 19 874 262 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 19 874 260 ՀՀ դրամի փոխարեն /89 523 700 + 9 847 610 * 20%/՝ որպիսի պայմաններում փոխվում է նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը:

Բացի այդ, «Գայսաթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկի գումարը չի համապատասխանում Մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի կատարման համար նշված ընդհանուր գումարին: Մասնավորապես՝ 89 523 700 ՀՀ դրամ (ինքնարժեք) + 9 847 610 ՀՀ դրամ (շահույթ) + 19 874 260 ՀՀ դրամ (ԱԱՀ) = 119 245 570 ՀՀ դրամ (ընդհանուր գին), այլ ոչ թե 119 245 560 ՀՀ դրամ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնային առաջարկում անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում կիրառելի չէ Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկելու հնարավորությունը, ուստի տվյալ դեպքում ԱԱՀ-ի և ընդհանուր գնի սխալ հաշվարկելու հանգամանքը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն՝ որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն իրավաչափ չէ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արհովշին» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/48 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԳԾ-ՀԲՄ-ԱՇՁԲ-2020/1» ծածկագրով Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետը և ընդունել «Գայսաթ» ՍՊԸ-ի հայտն 1-ին չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում,

- մասնակի դադարեցնել՝ «Գայսաթ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասով 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 1-ին ենթակետը,

- դադարեցնել 03.04.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետը,

- ընդունել «Արհովշին» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**